


ՀԱԺԱ  
ՓՇԱԿԵԼԱ



# ՅԵՂՆԻԿԻ ԶԱԳՈՒԿԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ՊԵՏՂՐԱՏ



ՎԱԺԱ ՓՇԱՎԵԼԱ

894.631-93

ՄՅՈՒԳՎԵՄ Է 1961 թ.

# ՅԵՂՆԻԿԻ ԶԱԳՈՒԿԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Վրացերենից թարգմ. Գ. ԱՍՏՈՒՐ

Նկարները Ա.Ն. ԳԱՍՊԱՐՅԱՆԻ

A  $\frac{23054}{1107}$



ՊԵՏՂՐԱՏ

ՀԱԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ԾԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ


ՅԵՐԵՎԱՆ

193



THE UNIVERSITY OF CHICAGO

1911



## ՅԵՂՆԻԿԻ ԶԱԳՈՒԿԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

### I

Փոքրիկ եմ, վորբուկ: Բախտն իր յերեսը թեքեց ինձանից — շատ վաղ վորբացա: Հագիս ունեմ վորբրիկ մուշտակ. կարճ մագից, սպիտակ բծերով: Պոզերս ու ատամներս դեռ չեն դուրս յեկել: Կրճղակներս նույնպես դեռ չեն ամրացել:

Ճամփաս կորցրած ման եմ գալիս: Նայեցեք արյունոտ վոտիս. սա վիրավորվեց այն ժամանակ, երբ ձորն իջա ջուր խմելու:

Սիրտս նեղանում ե... սիրտս... խեղճ մայրիկ: Քանի դեռ նա կենդանի յեր, շարունակ փաղաքշում եր ինձ, ծիծ եր տալիս, գուրգուրում, նախազգուշացնում: Ի՞նչ կլինի հիմա խղճուկիս հալը: Ել ծիծ չեմ ուտում, խոտի ցողն եմ ծծում առավոտ ու իրիկուն, թե ցոյ ե լինում, և կաթի ծարավս նրանով հագեցնում: Անտեր եմ ու անպաշտպան. շարունակ վախենում եմ ու դողգողում: Ամեն որ սպասում եմ մահվան: Ճամփաս շփոթել եմ... Ո՛հ, տեր աստված. ինչքան թշնամի ունենք մենք:

Քիչ առաջ յես տխուր-տխուր մոտեցա մար-  
զագեանի արին... Այս ու այն կողմ աչք եյի ածում:  
Հանկարծ գլխիս վերևից մի ձայն լսեցի: Նայեցի,  
տեսնեմ՝ սեղմած թևերով, կտուցը բաց մի ահա-  
զին թռչուն իջնում ե ուղիղ ինձ վրա: Յես սար-  
սափած վոստյունն արի անտառի կողմը, իսկ թըռ-  
չունն իրեն պահել չկարողացավ և իմ առաջվա  
տեղն ընկավ: Մարտու ե անցնում մարմնովս, յերբ  
մտաբերում եմ նրա կեռ կտուցն ու սուր ճանկե-  
րը: Նա ցած նետովեց ուղիղ իմ վրա, բայց ինձ իմ  
առաջվան տեղը չգտնելով՝ թըռմփաց խոտերի և  
մոշի թփերի մեջ: Նա իր դեղին աչքերը դես ու  
դեն շրջեց, դժգոհեց իմ փախչելուց, ձգվեց, վոր  
բարձրանա, բայց հազիվ կարողացավ ազատվել —  
քիչ եր մնացել մոշիների մեջ կաշկանդվեր: Յես  
պահվել եյի ծառի հետևը և մեկ աչքով նրան եյի  
նայում սրտատրոփ:

Մատաղ լինեմ քեզ, անտառ: Դու ոգնում ես  
շատերին, ապա թե վոչ մինչև հիմա իմ մուշտակի  
մեկ մազն անգամ չեր մնա: Միրտս նախագուշա-  
կում ե, վոր գոհ պիտի դառնամ թշնամուն: Յես  
դեռ անփորձ եմ. միայն մեկ շաբաթ եմ յեղել մո-  
րբս հետ: Նա յեր ինձ սովորեցնում, թե ո՞վ ե իմ  
թշնամին և ո՞վ՝ բարեկամը: Իսկ հիմա ո՞վ կսովորեց-  
նի: Շարունակ պառկում, թագնվում եմ շամբուտի  
մեջ. հանգիստ չունեմ մոծակներից ու մժեղնեերից՝  
Մայրիկի հետ ապրելը շատ լավ եր, ազատ եյի  
շնչում:

Անտառից հիմա հեռանալ չեմ կարող. յեթե  
մինչև անգամ դուրս գնամ մարզագետին, այնուա-  
մենայնիվ անտառի մոտերքից չպիտի հեռանամ:  
Բայց այս դեպքում ևս կյանքիս կեսը կորչում ե—

շարունակ դես ու դեն պիտի նայեմ, թագնվեմ ծառերի, ժայռերի հետևը, խոտերի մեջ ու դողդողալով կերակուրս ուտեմ — ահից փոտիս վրա հալվեմ... Ախ ի՞նչ մեղք եմ գործել յես, ո՞վ մարդ, առա՛ ի՞նչ: Ինչո՞վ մեղանչեց իմ մայրը. ի՞նչդ խմեց, ի՞նչը կերավ, փոր նրան սպանեցիր, ինձ փորբացրիր ու թողիր անտեր-անտիրական:

## II

Ահա այն անտառապատ բլուրը, փոր պռակել-  
ձգվել ե և փորի ամեն կողմից ձորեր են իջնում... Այնտեղ եյինք ապրում յես ու մայրիկս և շարունակ ստվերավորված եյինք թավ անտառով: Անմատչելի յեր մեր բնակարանը: Մայրիկս պռակում եր բլրի գլխին, իսկ յես՝ նրա կողքին: Յերեք կողմից ծառերն եյին մեզ ծածկում, իսկ չորրորդ կողմից մայրիկս եր զիտում: Յերբեմն նա ականջները սրում եր, յես ել նրան նայելով և նրան ընդորինակելով՝ իմ փոքրիկ ականջներն եյի սրում:

Կյանքիս մեջ յես յերեք անգամ ոտարոտի ձայն եմ լսել: Այդ ձայնը նման չեր վո՛չ առվակի կարկաչյունին, — փոր ամեն որ լսում եմ, վո՛չ մշահավի շրվշրվոցին, վո՛չ կտցահարի թխկոցին, վո՛չ չոր ծառի կատարից ընկած ճյուղի շրխկոցին և վո՛չ հովից շարժվող տերևների սոսափյունին... Յես միայն այս նկատեցի, փոր այդ ոտարոտի ձայնը լսելուն պես մայրս իսկույն վեր եր կենում և ասում — Վո՛րդիս, հետևիցս արի:

Փախչում եր նա ու յես ել նրա հետևից փոստոստում եյի ինչքան ույժս կպատեր: Վո՛չ գիտեյի և վո՛չ հասկանում եյի՝ թե ու՞նից եր նա զգուշացնում: Իսկ այժմ գիտեմ — մարդու ձայնն եր այն... Ո՛հ,

մ'արդ, ինչո՞ւ գեթ մի քիչ չես խղճում ինձ. ինչո՞ւ չես տալիս ազատություն, վոր շրջեմ հանգիստ, անվախ տրորեմ սիրուն, կանաչ խոտը, բարձրանամ սարը և հրճվեմ իրկնազեմի զովով...

### III

Վախենում եմ... և ինչպես չվախենամ: Դեռ ընդամենը մեկ շաբաթ ե, ինչ աչքերս բացել ու տեսնում եմ այս չար աշխարհը...

Յեվ մոռքան ա՜ն ու վիշտ եմ քաշեր: Անցյալ որն անձրև եր գալիս:

Մայրիկս, կենսախինդ և ուրախ, կանգնած եր հաճարենու տակ և ախորժակով վորոճում եր: Յես ել նրա կողքին: Ուրախ եյի, վոր մայրիկիս մոտ եյի կանգնած: Մայրիկիս ապավինած՝ թշնամին ու մահը մտքովս անգամ չեյին անցնում...

Ծառի խիտ սաղարթից անձրևի շուրն իջնում եր կաթ-կաթ: Գլուխս տակն եյի պահում, վոր գուրեկան կաթիլներն ինձ զովացնեն:

— Դո՞ւր ե գալի, վորդիս, հարցրեց ինձ մայրիկս:

Յես գլուխս շարժում եյի և ցատկոտում, կամ թե մայրիկի ծծերը կամտում:

Մեր առաջ մի չոր ծառի շուրջը պտտվում եր կտցահարը և այնպես բարձր ձայնով եր ծեծում ծառը, վոր զարմանում եյի, թե ինչպես ե, վոր մայրիկս այնքան մեծ ե և չի կարողանում այս փոքրիկ թռչունի չափ աղմկել անտառում: Պտրտվում եր ծառի շուրջը, վրաները թխկացնելով և կտուցը խփելով մերթ այստեղ, մերթ այնտեղ... Յես հրճվանքով նայում եյի կտցահարի աշխատանքին:



Հանկարծ լսեցի.

— Զխի, չխի:

Նայեցի, տեսնեմ՝ մեր գլխին մի ուրուր ե պտրա-  
վում:

— Գլուխդ իմ կողմը բեր, — ասաց մայրիկը, —  
թե չե ուրուրն աչքերդ կհանի:

Յես գլուխս մայրիկին ապավինեցի: Մայրիկն  
այն անպիտանից պաշտպանվում եր պողերով:  
Ուրուրը շարունակ իմ կողմն եր քաշվում... Շատ  
աշխատեց, բայց հետո թողեց ու գլխիկոր ցատկեց  
հաճարենու ճյուղի վրա և սկսեց մլավել: Նրա  
ձայնն ուղիղ իմ ձայնին եր նմանում: Մայրիկը  
ծիծաղեց ու ասաց.

— Շատ խորամանկն ե այս ուրուրը: Զգուշ  
կաց, բալիկ ջան: Քեզ նման փոքրիկներին նա շատ  
ե թշնամի... Սկսում ե տնքալ ու մլավել, և, յեթե  
մոտերքում քեզ նման մի անփորձ ու անկիրթ յեղ-  
նիկի հորթուկ ե լինում, ուրուրին ձայն ե տալիս,  
պատասխանում: Մա ել հենց այդ ե ուզում: Վրա  
յե թուշում ու աչքերը հանում:

— Ծպտուն անգամ չեմ հանի. իսկույնս կեթ  
կթագնվեմ, — պատասխանեցի յես:

— Հա, այդպես, այդպես, բալիկ ջան: Քանի  
փոր մայրիկդ կենդանի յե, դու մի վախենար:  
Յերբ յես չեմ լինի, այն ժամանակ դու շատ ըզ-  
գուշ պիտի լինես:

— Ո՛հ, վնրբան փորձառություն ե դեռ ինձ պա-  
կաս...

#### IV

Մեկ անգամ շատ շոգ եր: Մայրիկս մահճից  
վեր կացավ և ասաց.

— Գնանք շուրը:

Գնացինք մատղաշ անտառով ծածկած բլրի վրայով, անցանք շամբուտի միջով ու մտանք ձորը: Ձորը խորն էր. արևի ճառագայթները նրան չեյին հասնում: Իես ու դեն, ավերին, ծառերն իրար եյին խճճվել իրենց կատարներով: Ծառիտակ, ձորաբերանին վայրի մոռն իր արմատներն էր դուրս հանել, իսկ նրա կարմիր գլուխները կախվել նայում եյին ջրի հոսանքին: Մառն ու անապակ շուրը քչքչում էր փողորկ քարերի վրայով, ու մեկ ժայռից մյուսը թափվելով լճանում: Մայրիկը գընաց ու կանգնեց լճակի մեջ: Յես հագրիվ եյի ման գալիս քարերի վրա — կճղակներս ցավում եյին:

— Արի՛, բալիկ ջան, շուրը մտի՛ր, շոգին ջրի մեջ կանգնելը դուրեկան է:

Յես մոտեցա և գգույշ դեռ մեկ փոստ դրի ջրի մեջ: Ձուրը սաստիկ սառն էր: Իսկույն հետ ցատկեցի:


— Յուրտ է, չեմ կարող կանգնել:

— Վնչինչ, այժմ յանից պետք է սովորես, փորդիս:

Փոքր ինչ կանգնած մնացինք ջրի մեջ ու հետո վերադարձանք: Մեզնից վերև, կարտած անտառի կողմից լավում եյին ինչվոր ձայներ:

— Սրանք փտանգավոր չեն, — ասաց մայրիկը, — մի կին է ու մի փոքրիկ յերեխա: Մեր թշնամին այդպես չի աղմկի: Այնուամենայնիվ մեզ հարկավոր է գգույշ լինել: Մենք բարձրանանք այս մատղաշ անտառով, մարգագետնի ափին չերևանք:

Մայրիկն առաջ գնաց: Իմ սիրտը չհամբերեց և դուրս նայեցի, մարմինս թագգրած՝ գլուխս միայն յերևացրի: Այդ ժամանակ ներքևից ձայն լսեցի:



— Վճյ, վճյ, սզի, գել, սզի ջան, գել, — ասում  
եր մի յերեխա:

— Մի՛ վախենա, վորդի, քե մատաղ. ի՞նչ տեղ  
ա գելը, շանց տո՛ւ — հարցնում եր յերեխայի մայ-  
րը:

— Հրե՛ն, տեսնում չե՞ս, անգաճները սրել ա,  
մերու միջումը, — աչքերն արտասուքով լի՛ յերե-  
խան իմ կողմն եր ցույց տալիս:

— Վճյ, ազին քե մատաղ ըլի. դա գել չի, ջեյ-  
րանի բալա յա: Քա՛ ի՛նչ սիրունն ա:

— Ազի ջան, հողուդ մատաղ, բռնենք, — համո-  
զում եր փոքրիկն իր մորը ու անհամբեր պատ-  
րաստվում եր մեր կողմը վազելու:

— Ձե, ցավդ տանեմ, մեղք ա: Ախր դա ել մեր  
ունի, լաց կլի վորդու հրմա:

Յես՝ շունչս բռնած ականջ եյի դնում: Ինձ դուր  
յեկավ, յերբ մեզ խղճալու միակ խոսքը լսեցի:  
Կրկին ուզում եյի ականջ դնել, բայց մայրիկը  
վերադարձել եր: Նա մոտ վազեց ու ասաց.

— Այ դու տխմար, դու հավատում ես սրանց  
ասածին: Մի՛ նայիր այն կողմ: Հեռանանք շուտով:  
Հետևիցս արի, թե չե դրանք կերթան, վորտորդին  
կսովորեցնեն մեր տեղը ու հետո՛ մնաս բարով,  
կյանք:

Խեղճ մայրիկը նախազգում եր, վոր այդպես  
ել պիտի լիներ:

## V

Յատկեց մայրիկը. յես ել իսկույն ցատկեցի  
ու փոստոստալով գնացինք դեպի վեր: Վերջին խոս-  
քերը, վոր յես լսեցի կտրտած անտառի կողմից,  
այս եյին.

— Վճույ, քան, նրա մերն էլ ընտեղ ա ըլե:

Սկսեցին բարձրանալ շամբուտ, կոճղառատ լեռնայան շոփ: Խոճիկների արմատները սառնորակ աղբյուրներով եյին շրջրված:

Այնտեղ, աղմի մեջ նշմարվում եյին ինձ նման փոքրիկ յեղնիկի հետքեր: Սաստիկ շոգ եր: Նեղանում եյինք: Պառկեցինք խոճիկների միջև նրանց լայն տերևները մեզ պաշտպանում եյին արևի թեժ ճառագայթներից:

Հանկարծ շրջակա լեռների գագաթներից ամպեր յերևացին և իրար մոտեցան: Յերկիրնքը վորոտաց, ճաքճաքեց, փայլակը փայլատակեց:

Դիմացի բարձունքների վրա անձրևի տարափ տեղաց: Շուտով մեր շուրջն էլ, ծառերի տերևների և ժանափանդ խոճիկների վրա, շփշրփոցն սկսվեց: Բարձրացավ այնպիսի աղմուկ, վոր կարձես անտառը, սար ու ձոր քանդվում եյին:

Ամեն շնչավոր ձայնը կտրեց. թռչուններն այլևս սիրտ չեյին անում ճկճրկալ, խաղալ... Գարշելի ուրուրը, վոր առաջ ինձ այնպես ահաբեկում եր՝ այլևս զարհուրելի չթվաց ինձ. նա նստել եր մի ցածրիկ հաճարենու վրա, աչքերը խփել ու կրտուցից փսլինք եր թափում. ուսերը վողորմելի ցած եր կախել: Նրան մոտիկ նստել եր մի կարմրակուրծք թռչնիկ՝ «հաճարենու ծիարը», մի անմեղանյխաս քաթուղիղակ, և խփել եր սիրուն-սիրուն աչիկները: Թռթռալով մոտեցավ «ծրիպասանը» և կանչեց.

— Ծրիպ-ծրիպ...

Ուրուրը վախեցավ, աչքերը չռեց ու լեղապատառ դես ու դեն եր ընկնում անճոռաբար «չխի, չխի» կանչելով:

Յես ծիծաղեցի: Առաջ նրան յես ամենաուժեղ  
Թռչունն եյի կարծում, իսկ հիմա հասկացա, թե  
ինչ պտուղն ե յեղել:

VI

Ամպրոպն անցավ: Թռչուններն սկսեցին իրենց  
համերգը: Խոտերն ու ծառերի տերևներն ուրա-  
խուլթյան արցունքներ եյին թափում: Մայրիկը սի-  
րում եր թարմ անձրևանցին զբոսներ: Գնում եր  
մարգագետինն ու ինձ ել հետը տանում: Հիմա ել  
գնացինք ու մարգագետնի ափերով լեռան կողմն  
ուղևորվեցինք:

Լսվում եր սրնգի անուշ ձայն: Լեռան ստորո-  
տին փռվել եր վոչխարն ու անուշ անուշ արածում  
եր նոր թրջված խոտը: Արևը կիսով չափ թազնվել  
եր բլրի հետևը. նրա աղոտ ճառագայթները հրա-  
ժեշտ եյին տալիս լեռների և անտառի կատարներին:



Վերևը, բլրի լանջին, նստած եր հովիվը յափնջու-  
մեջ փաթաթված ու սրինգ եր նվագում: Նրա կողքին  
շնթուվել եր մի թավամազ ու զարհուրազեմ գամփո,

ժիր - ժիր շրջում եր աչքերը հոտի վրա և յերբեմն  
գգվանքով նայում իր տիրոջը:

— Վատ տեղ յեկանք, — ասաց մայրիկը: — Հովիվն  
անգննե, նրանից մի վախենա, բայց շունը մեր  
հոտը կաննի ու կարելի ե հետապնդի մեզ: Հետ  
դարձիր. աչք բռնիր, թե մեր կողմը վազեց, յես  
նրան կերևամ, իսկ դու թագնավիր խոտերի մեջ:

Հոտը՝ մեզ նկատելով՝ խրտնեց և սկսեց մեր-  
կողմը նայել: Յես թագնավեցի խիտ, պառաւած  
թփերի մեջ և աչքերս չեյի հեռացնում այն  
թավապոչ գամփռից...

Հոտի խրտնելն ու շան վնաստալը մեկ յեղավ.  
նա սրեց ականջներն ու մեր կողմը նետվեց...


Հովիվը մեզ վրա գոռաց, դողս բռնեց: Գամփռը  
նկատեց մայրիկին ու նրա կողմը վազեց: Մայրիկը  
սլացավ ու մի ակնթարթում աչքիցս կորավ: Աչ-  
քերս արտասովկայեցին. յես նվազեցի: Վայ գլխիս,  
մայրիկ ջան, յեթե այդ գարշելին քեզ բռնի: Յես  
յերկար լսում եյի փախչող վոտների ու ձորը  
թափվող քարերի ձայները:

Իսկ յեթե նա բռնել ե մայրիկին ու գզում ե  
իր սուր ատամներով... ֛, վայ ինձ...

Արդեն մթնշաղ եր: Հովիվը սուլեց հոտին  
և դեպի տուն քչեց: Սրտատրոփ հեռուում եյի  
նրա շարժումին: Խեղճ վոշխարներին հովիվը  
ծեծում եր, միքանիսի վրա քարեր նետում: Ինձ  
նման մի փոքրիկ գառնուկի քար խփեց: Խեղճը  
վայր ընկավ և սկսեց վոտները թափահարել...

Հովիվը բարձրացավ բլուր և սկսեց կանչել  
շանը. — Դ՛ուրջիա, Դ՛ուրջիա:

Փոքր ինչ հետո հորիգոնի վրա յես նկատեցի  
նրա Դուրջիային, վոր կարմիր լեզուն դուրս գցած՝  
կանգնել եր տիրոջ կողքին:





Յես վախենում եյի, մտածում թե մի գուցե մայրիկի արյունով ե ներկել իր գունչը:

Մի՛նեց: Խորը խավար եր: Վոչ մի տեղից ձայնչեր լսվում: Ի՞նչ յեղավ մայրիկս: Դուցե ինձ չգտնի՝ անգամ, յեթե նա կենդանի յե:

Հանկարծ մի ձայն լսեցի. մայրիկիս ձայնին եր նման: Յես ել նրան ձայն տվի: Խեղճ մայրիկս եր, հոգնած, ուժասպառ վրաս ընկավ:

— Այստե՞ղ ես, բայիկ ջան: Մի վախենա, մայրիկդ կենդանի յե: Շունն ու գայլը նրա համար փտանգավոր չեն: Դու հո կենդանի՞ յես:

— Կենդանի յեմ, — սլատասխանեցի յես:

Մայրիկն սկսեց կարոտալի փաղաքշել ինձ... Արդյոք ո՞ւմ գի՛մեմ լալով, ո՞ւմ աղերսեմ: Ո՞վ ե այն ամենակարողը, վոր միջոց տար ինձ գոնե մեկ անգամ ևս նայելու մայրիկիս աչքերին և յերջանկացներ մայրիկիս գգվանքն ինձ նվիրելով...

Ի՞նչպե՞ս տանեմ յես այս վիշտը: Յերանի ինձ ել սպաներ արյունարբու թշնամին: Ա՛խ, ինչո՞ւ մնացի յես կենդանի:

Նախընթաց որը յես գմայլվում եյի իմ կենդանի և գեղեցիկ մայրիկով, իմ հույս ու ապավենով, և մի՞թե մտքովս կանցներ, վոր հետևյալ որը յես հավիտյան պիտի կորցնեմ նրան:

## VII

Ամբողջ գիշերն զբոսնում եյինք մարգագետնում. այլևս չեյինք վախենում: Մտանք աճարի արտն ու շատ լավ ժամանակ անցկացրինք: Լուսաբացն սկսվեց ու մենք քաշվեցինք անտառ: Անիծվի այն որվա լուսաբացը...

Մարգագետնի վրա պառկած եյին խոտի հաստ

շերտեր: Այնտեղ կանգնած յերկու-յերեք կեռասնինների վրա ծտեր ու մշահավեր եյին հավաքվել յերամներով. լսվում էր նրանց ժրվժվոցը: Մի քանիսը գալիս եյին, մի քանիսը գնում, իրենց գավակները համար ապրուստ եյին տանում: Մայրիկն ինձ նախազգուշացրեց և ասաց.

— Այսպիսի ժամանակ վտանգավոր է ման գալ. մեր թշնամին անձրևանցին է մեզ վորոնում: Աչք ածա՛ս դես ու դեն:

Սա մայրիկիս վերջին նախազգուշացումն էր. նատխուր եր. կարծես նախազգում էր մահը. յերբեմն յերբեմն մի տերև էր պոկում և իսկույն դադարում:

Մեր վերև իրար շատ մոտ ուռենիներ եյին բուսել: Նրանց առաջ կանգնած եյին յերեք թե չորս հատ սեղմված ու դեպի վեր ձգվող կեչիներ...

Հանկարծ ամպրոպի նման վորոտաց հրացանը: Նրա ձայնը դղրդաց սարերում ու ժայռերում. ծառերի տերևներն ու բույսերն սկսեցին դողալ: Ծուխը փռվեց թաց խոտի վրա: Մայրիկը մեկ անգամ միայն տնքաց ու վայր ընկավ: Վայ — յես տեղն ու տեղը ծալվեցի: Տեսնում եյի՝ ինչպես մայրիկս ցած է գլորվում և արյան հետքեր թողնում խոտերի մեջ: Կեչիների հետևից դուրս վազեց մի ջահել տղա՝ գորշ չուխայի փեշերը հետ ծալած:

— Ջան, — բացականչեց նա և արագ վազեց մայրիկիս հետևից:

Խեղճ իմ մայրիկս, նա ձգնում էր վեր կենալ, ձգվում էր, բայց նրա ծնկները նորից ծալվում եյին և նա ընկնում էր ու նորից գլորվում: Յես նվաղեցի-անշնչացա, յերբ գարշելի վորսորդը մերկացրեց փայլուն դաշույնն ու քսեց մայրիկիս կոկորդին:

Արյունը ցալսեց ու սրսկեց ծառերը... Վայ ինձ,

107



ամեն բան պարզ տեսնում եյի, բայց ինչո՞վ կարող  
 եյի ոգնել յես՝ խղճուկս: Հրեն ծծերին, այն ծծե-  
 րին, վոր յես ծծում եյի, տղան քսեց դաշույնն ու  
 կտրատեց: Իհակն ուսն առավ ու գնաց...

Յես սկսեցի լալ... Ուշքս գնաց...

Այն ժամանակից յես կենդանի-մեռած եմ:  
 Լալիս եմ, և այս ե միակ սփոփանքը: Ման եմ  
 գալիս ու լացով դիմում ծառերին, սարերին,  
 ժայռերին: Լացով դիմում եմ ջրին ու խոտին, բայց  
 ինձ համար մայր չի ստեղծվում:

Ո՞վ պիտի հիմա իմ արյունով ներկի իր ձեռ-  
 ները...



ՊՃբաղեր՝ Գ. Ղ ա զ ա ը յ ա ն  
Տեխ. իմքադեր՝ Ս. Գ ա ս տ յ ա ը յ ա ն  
Սըբադերիչ՝ Ա. Ա ը զ ա ը ա ն յ ա ն

Գլավիտի լիազոր Կ—4527, հրատ 4037  
Պատվեր 608, ախրաժ 4000  
Պետհրատի տպարան, Յերևան, Լենինի 65

2904

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0004430

[044.]

403

А II  
123054

9822 70 407.

ВАЖА ПШАВЕЛА  
ПОВЕСТЬ О ДЕТЕНИШЕ ОЛЕНЯ  
ГНЗ ССР А ЕРЕВАН

1940